

ՀԱՍԽՈՍՈՒԹԻՒՆ

Ճանապարհորդութիւն Պողիկտեսի 'ի Հոսիմ :

ԹՈՒՂԹ Բ. — Շարունակութիւն :

Քալած ժամանակնիս՝ ես զարմացած կը նայէի այն անհամար ժողովրդեան վրայ, որ շարունակ ծովու ալիքներու նման իրարու կը յաջորդէին : Առջի բերան կարծեցի որ կարգէ դուրս գիպուած մը այսչափ մարդկանց բազմութիւն մի և նոյն տեղ ժողովելու է, ինչուան որ քաղաքը խել մը տեղ քալէն ետև՝ միշտ նոյնչափ բազմութեան հանդիպելով, իմացայ հռովմայ բնակչաց որչափ խեղճ դուրս բազմութիւն ըլլալը : Արջապէս Կնէոս Ոկտաւիոս հիւպատոսին տունը հասանք : Գտանք զինքը զօրաց գլխաւոր սպաներուն հետ, որոնց նոր շահատակութեան մը համար հասարակապետութեան հրամանները կ'իմացընէր : Ինքը փղոսկրեայ աթոռի մը վրայ նստած էր՝ քանի մը աստիճան բարձր . կրնար կարծուիլ թագաւոր մը իր գահին վրայ նստած, եթէ չորս գին կեցողներուն յարգական ու ազատ վարմանը կերպէն չլմացուէր որ կը պատուէին զինքը իբրև գլխաւոր մը և ոչ ինքնահրաման տէր մը : Տրիբունը անոր ներկայացուց իրեն թղթերը, և երբ հիւպատոսը մեծաւ ուշադրութեամբ զանոնք կարդալ սկսաւ, ես ալ անոր գէմը սկսայ զննել, գուշակել ուղեւոր խմբին ապագայ վիճակս : Անոր կերպերը, ինչպէս որ ինծի կ'երևար, սարսափով սիրտս կը լեցընէին . իրեն վարմունքը ծանր էր, կերպարանքը խիստ, աշուրները սպառնալից, ձայնը դաժան . այնպէս որ չէի կրնար հաւատալ թէ սիրտը զգացմունք ունենայ : Երբոր կարգաւ լմնցուց, խել մը բան հարցուց Տրիբունին, առանց ամենեկին ինծի աչքը դարձնելու : Տրիբունը անոր հարցմունքներուն պատասխանը լմնցընէն ետև՝ բռնեց զիս ձեռքէս ու անոր ներկայացուց : Ան առանց հիւպատոսը դիտելով մը ինծի նայեցաւ, և ինչպէս թէ երկատարութեանս վրայ դուրս շարժելով՝ այս խօսքերս սկսաւ ինծի ըսել յունարէն . “ Սիրող գրով ինծի կ'իմացընէ քու ինչ աստիճանի ըլլալդ, ու ինչ պատճառաւ հոս հրառովմ բերուիլդ : Սիրով ճակատագրիդ ձեռքը յանձնէ ինքզինքդ . և գիտցիր, որ կարծածիդ պէս խիստ չէ : Քեզի ընկերող սպայն, որուն սիրելի եղեր ես, զքեզ իմ խնամոցս կը յանձնէ . ես ալ կը խոստանամ քեզ, որ իրեն իմ վրաս ունեցած վստահութիւնը պարապը պիտի չհանեմ : Դուն իմ տունս կը կենաս իմ որդւոցս հետ : Սովորէ մեր լեզուն, մեր օրէնքները . մեր սովորութիւնները դիտէ, իմացիր, և ամենէն աւելի մեր զօրութեանը վրայ ջանս աւելցուցութիւն առնելու . որպէս զի օր մը քու հայրենիքդ որ դառնաս, կարենաս հասկնալ Յունաց՝ որչափ յիմարական ու վտանգաւոր ըլլալը, որ և իցէ ժողովրդեան, ընդգրկուելով ինչ ցուցնելը հռովմայ զօրութեանը դէմ : Հիմկուհիմ կրնաս ուղածիդ պէս մեր պարսպներուն մէջ պտրտիլ, ու մեր գեղերուն այցելութեան ելլել . պատերազմի օրէնքները հիւր-

ընկալութեան իրաւանցը ամենեկին արգելք չեն . միայն թէ այս մտքէդ չհանես, որ այդ իրաւունքները փոխադարձ են : Այս զրուցեց, ու առանց ինձմէ պատասխանի սպասելու՝ քովններուն դարձաւ, ու իր առջի խօսակցութիւնը սկսաւ առաջ տանիլ, որն որ մեր հասնելուն պատճառաւ ընդհատեալ էր :

Այգալիսի անակնկալ ընդունելութեան հանդիպելուս վրայ զարմացած ու ապշած՝ կ'ուզէի իմ երախտագիտութիւնս յայտնելու այն ազնիւ մարդուն, բայց չհամարձակեցայ . ինչու որ իրեն այն բնական դաժան կերպը նաև իրեն այնպիսի բարեսրտութեան ժամանակն ալ չէր փոխուած : Անոր համար դարձայ Տրիբունին, որն որ անոր ըրածին վրայ ինքզինքը գոհ կը ցուցընէր, ցած ձայնով մը այս խօսքերս զրուցեցի . “ Ո՛վ առաքինի մարդ, ինչպէս կըցայ ես այդչափ քիչ ժամանակի մէջ այդչափ բարեսիրութիւն ազգելու քեզի, որուն քաղցր պտուղները հիմակուց սկսայ վայելել : — “ Քու թշուառութեան վիճակովդ, պատասխանեց ինծի : Այս ժամանակիս հիւպատոսը իւր աթոռէն իջնելով՝ սպային մօտեցաւ ու բարեկամութեամբ անոր ձեռքէն բռնելով ըսաւ . “ Սիրեցեալ Կալպուստինէ, գնա քիչ մը հանգիստ առ, որուն շատ կարօտութիւն ունիս . կը յուսամ որ գիշերքեզի առաջին առողջութիւնդ նորէն շնորհէն : Տրիբունը դուրս ելաւ . քիչ մը ետքը մէկալ սպաներն ալ ետևէն գացին : Անոնց մեկնելէն ետքը՝ տեսայ որ ծեր մարդ մը ներս մտաւ, որն որ տանը ծառաներէն մէկը կ'երևար : Երկայն մազ ունէր ու թաւ մօրուք մը . հագած էր մէկ սև գունով ու բոլորովին գոց երկայն զգեստ մը, որուն վրայ կար մէկ վեղար մը՝ որն որ ուսէն վար կախուած էր . ոտքն ալ սանդալ հագած էր : Հիւպատոսը անոր քանի մը խօսք զրուցեց իրենց լեզուով . ան ալ ձեռքէս բռնեց ու ինծի համար որոշուած տեղը տարաւ զիս : Երբոր ներս մտանք, ըսաւ ինծի . “ Ահա, պարոն, այս է քու բնակութիւնդ . հոս կան ամէն քեզի հարկաւոր եղած բաները, և ինչ բանի ալ որ ախորժ ունենաս՝ հոս կը գտնես . և մէկ գերի մըն ալ քեզի պիտի ծառայէ միշտ պատրաստ հրամաններուդ, զորն որ ես անձամբ պիտի ընտրեմ այս տունս գտնուող շատերուն մէջէն, որուն վրայ կը յուսամ որ գոհ կ'ըլլաս : — “ Բայց գուցէ ես, հարցուցի, հիւպատոսին քովը ինչ պաշտօն ունիս : — “ Ես ալ գերի մըն եմ, պատասխանեց . բայց երկար ծառայութիւններով և պարգևութեամբ, ու իմ վիճակէս վեր դաստիարակութիւն մը ունենալով՝ ախորժս վստահութիւնը եղաւ իմ վրաս : Ինքն ինծի յանձնէր է իւր որդւոցմէ մէկուն կրթութիւնը, զորն որ շատ կը սիրէ, և աղան մեծամեծ առաքինութեանց յոյս կու տայ : Ես աւոր վարուցը կ'առաջնորդեմ, անոր վարժապե-

տաքը վրայ կը հսկեմ, ու որ բանն որ հռովմայե-
ցեցմէ սովորելու չկրնար յուսալ՝ ես կը սովորե-
ցնեմ: Հիմա հիւպատոսը կ'ուզէ, որ ես զքեզ ալ
հոգամ լուկիոս պատանւոյն հետ մէկ տեղ. քեզի
թարգման պիտի ըլլամ, ինչուան որ դու հռովմայ
էզոնն սովորես. ու որ պարտելու ելլես, հետք
գամ պիտի, ու ինչ բանի մեկնութիւնն որ ուզես,
քեզի պիտի հասկըցնեմ. ու իմ աշխատանքս
քաղցր փոխարէն կը սեպեմ թէ որ երբեմն երբեմն
յիշելու ըլլաս, որ երկուքներնուս հայրենիքն ալ
մի և նոյն է 33:

Այս սիրալիր հոգողութիւնը սիրտս շարժեց,
մանաւանդ երբոր իմացայ անոր ով ըլլալը: Ազատ
ցեղէ մը ծնած, պատերազմի օրինք գերի ինկած
ինչպէս Սիրակուսայի մէջ Աթենացիքը, իր վիճա-
կին դառնութիւնը մեղմացուցեր էր՝ իրեն տեսարց
հաղորդելով այն ամենայն տեղեկութիւնները, ու
րոնցմով իր միտքը զարգարուած էր: Ինծի ըստ
որ իրեն մասնաւոր հրաման եղած է իմ ամէն պէտքս
հոգալու, ու սա ալ աւելցուց որ ամէն օր, ինչ-
պէս հիւպատոսին ընտանիքէն մէկը, անոր հետ
սեղանակից պիտի ըլլամ: Այդ ինչպիսի բարու-
թիւն. այդ որպիսի մեծանշանութիւն: Հիմա ինչ
պէս կրնայ ըլլալ, որ մի և նոյն մարդիկ մի և նոյն
ժամանակ ըլլան անիրաւ և միանգամայն արգա-
րակորով, անյագ կերպով ագահ, ու կարգէ
դուրս ալ առատաձեռն: Անտարակոյս եմ որ չը-
լար. ինծի աւելի հաւատարմ կու գայ թէ բնու-
թիւնը, որ երբեմն բողբոջել կու տայ առողջարար
տուններ ամենաստասիկ թունաւորներուն քովը,
այդպիսի առաքինութեան օրինակ մըն ալ մեծ-
ցուցեր է այդպիսի բարարարութեան մէջ: Այս գաղա-
փարը ինծի քաղցր է. վասն զի այս զիս կը խրա-
խուսէ ամենայն կերպով կնէսն Ոկտաւիոսին ե-
րախտագէտ ըլլալու, ու բոլոր մէկալ հռովմայե-
ցիքը առանց զանազանութեան ատելու:

Ահա, ով սիրելի հայր իմ, քեզի տեղն 'ի տեղը
պատմեցի քեզմէ և իմ քաղցր հայրենիքէս հեռա-
նալէն ետե ինչ վիճակի մէջ մտնելու. իրաւ գերու-
թեան վիճակի մէջ իյնողի մը համար այս իմն է
անակնկալ բաղդ. բայց և այնպէս, ով հայր իմ
և հայրենիք, ձեր յիշատակը իմ սիրտս ամէն տե-
սակ վայելքը կը դառնայրնեն: Հիմա ես այս հոգ-
ալուստը քաղցրս մէջ եմ. ազատ եմ ու միանգա-
մայն բանտարկեալ. ստիպուած եմ հոս կենալու,
բայց ազատ եմ իրեն չընկալալին մէջ: Հիւպատո-
սին խորհրդոյն հետեւիմ պիտի, կամ աւելի հրա-
մանին պիտի հնազանդիմ՝ այս գոգող հռովմը լաւ
մը ճանչնալու համար, որուն համար սահմա-
նուած է կ'ըսեն որ բոլոր աշխարհիս պիտի տիրէ:
Կ'ուզեմ տեղեկանալ ասոր տարեգրութիւննե-
րուն, և հասկընալ ասոր մեծութեան աղբիւր-
ները, այս քաղաքացեաց ընդհանուր ոգին, ու իմ
դած զննութիւններս քեզի պիտի հաղորդեմ,
հայր իմ: Դու ալ, որ երկար ժամանակով կա-
ւաւարութեան արուեստին մէջ հմտացած ես,
յոս իմ տուած տեղեկութիւններէս կը հանես
յն հետեւութիւնները, որոնք որ քեզի արդար
ներան, ու կ'որոշես թէ արդեօք պէտք է որ
նքն ալ մեր յաղթողաց առջին ասկից ետքը միշտ
ունարհինք, և կամ թէ յոյս ունենանք երբ և իցե
արձեալ մեր ազատութիւնը ստանալու: Իւ այս-
լէս Զուռնաստանը կամ իրեն շղթաները կտարելու

պատրաստուի, և կամ անօգուտ փորձերով չմա-
շուի չհիւծի:

Բայց չկարծես թէ ես անարժան միջոցներով
պիտի ետեւ ըլլամ այս փափագած ծանօթու-
թիւններս ստանալու: Գիտեմ որ այնպիսի անար-
ժան գործքը դու կը մերժես զայրանալով մեծան-
շանութեամբ, ու ես ալ ինծի ամօթ կը սեպեմ:
Իրաւ է որ հռովմայեցիքը ատելու դժբաղդաբար
իրաւունք ունիմ, որոնց թշնամի եմ ու պէտք է
որ ըլլամ. բայց իրենց վարմունքը ինծի հետ ու-
րիշ բան չթողուր ինծի, բայց 'ի ազնուական վրէժ-
ինդրութիւն մը ընելու փափագէն: Ետեւ ըլլամ
պիտի իմանալու իրենց ակարութիւնը զօրութեանց
կարգաւորութեանը մէջ, որուն վրայ որ իրենք
կը պարծին: Այս բանիս համար գործածեմ պի-
տի զգուշութեամբ իմ այս ազատութիւնս, որ շնոր-
հեց ինծի ամէն բան տեսնելու ու հասկընալու.
բայց պիտի ջանամ ուրիշներէն լսածէս բոլորովին
տարբեր հետեանք հանելու: Այսպիսի գործո-
ղութեան վտանգաւոր ըլլալը գիտեմ, բայց զգու-
շանամ պիտի երեւոյթներէն ջնարուելու: Հռով-
մայեցեաց վստահութիւնը չէ թէ իրենց մեծան-
շանութեանն առաջ կու գայ, այլ իրենց զօրու-
թեանը վրայ բնական ունեցած համարմունքէն,
որուն գէմ եկած անարգանքը սննդատիժ չմիար:
Չեմ գիտեր թէ ինչ ճամբով կրնամ հաղորդել
քեզի իմ գիտողութիւններս: Ամենուն աչքը
վրաս ըլլալով՝ պէտք է որ շատ արթուն կենամ
որոշմունք մը ընելուս ատեն: Դու ալ քու նա-
մակներդ ուրիշ մարդու չյանձնես, բայց միայն
անոնց, որոնք իմիկներս քեզի բերեն. ասանկով
գոնէ ըստ մասին կը թէ թեւեղներք այն անհան-
գիստ սրտի հոգը, որ անխորշելի կ'երեւայ. իմ այս
գանուած վիճակիս մէջ բարեբաղդ զիս կը սեպեմ՝
թէ որ նաեւ իմ ազատութիւնս վտանգի մէջ գնե-
լով կարենամ հայրենեացս ազատութեանը գոր-
ծակից ըլլալ:

Թ Ո Ւ Ղ Թ Գ.

ՊՈՂԻԿՏԵՏ ԱՌ ԿՐԱՆՏՈՐ

Գերդաստանի մը նկարագիր: Ազատագիր-
ներ, գերիներ և արքանեակներ: Հոմմայ ժո-
ղովրդեան ասոյի ստորագրութիւնը:

Հռովմ մտած չմտած ինծի հանգիստ գէպ-
քերուն համառօտ պատմութիւնը ինչուան որ
չըրի երէկ իրիկուն՝ չկրայ հանգիստ առնուլ, ու
այսօր նոյն ժամուն որ այս տանս մէջը ամենքը
քուն ըլլալու հետ են, ես իմ պատմութիւնս կը
շարունակեմ: Հայր սիրելի, կը յուսամ որ ինչուան
հիմա առջի գրածներս առեր կարգացեր ես. կը
տեսնես թէ ինչպէս պարզ կը նկարագրեմ ամէն
տեսածներս, ինչպէս որ ինծի սովորեցուցեր ես
պարզախօս և ճշմարտախօս ըլլալու. ասկէց ետքն
ալ ջանամ պիտի որ առանց զարգարելու չտեղե-
տակ եղածը գրեմ: Իմ բնական տեղւոյս ստորա-
գրութիւնն ընելէն առաջ՝ կ'ուզեմ տեղեկութիւն

տալ քեզի այն մեծանձն մարդուն վրայք, որն որ արժանի կը սեպէ իբրեւ հիւր ընդունելու զայն մարդը, որ կրնար իբրեւ գերի գործածել:

Կնէոս Ոկտաւիոս հռովմայեցի երեւելի ազնուական ցեղերուն մէկէն առաջ եկած է: Իրեն հարքը հասարակապետութեան ամենէն մեծ պաշտամանց մէջ գտնուելու են, ու իրեն նախահաւը, որն որ սոյն անուամբ կը կոչուէր, ութսուն տարի կայ որ, Պերսէոսին նաւատորմին վրայ ըրած կատարեալ յաղթութեանը համար՝ յաղթանակի պատիւ ընդունելու է: Այս ազնիւ հիւպատոսը հիմա իր կենաց վաթսուներորդ տարւոյն մէջն է. հետ զհետէ տէրութեանը բոլոր պաշտօններուն մէջ մտեր ելեր է. ու գէմքին վրայ երեցած սպի ներէն յայտնի կ'իմացուի որ միայն անձնական արժանաւորութեցը պատճառաւ այդ մեծ պատուոյն արժանի եղեր է: Իսկ մը տարիէ ի վեր ամուսնի մնացած ըլլալով՝ իրեն բազմաթիւ ընտանիքէն միայն մէկ որդի մը մնացեր է իրեն, որուն համար կը ծախէ իր գատաւորական պարտքերէն դուրս աւելցած ժամանակը. ու մէկ աղջիկ մը, որն որ հանդերձ ամենական վայելչութիւններով ունի նաև ամէն տեսակ կանանց վերաբերեալ առաքինութիւնները: Ինչը միայն կը սովորեցնէ իրեն որդւոյն ինչ որ օր մը հայրենեաց պարտական է ընելու. անոր մանկական աշխոյժը կը վառէ պապերուն փառաւոր յիշատակներովը. կը կրթէ միանգամայն զինքը այն բարձր առաքինութեանց մէջ, որոնց բարի օրինակը ու պատուէրքը միանգամայն անոր աչքին առջին կը դնէ. և ինչպէս Թեոֆիլ զԱբելլէսը իր մանկութեան ատենը Ստիւքս վտակին ջրերուն մէջ կ'ընկղմէր զնա անխոցելի ընելու համար, այսպէս ալ աւելոր հռովմայեցիին իրեն իմաստուն խրատներովը կ'ամրացնէ զորդին ամենայն մարդկային տկարութեանց գէմ: Ահա այսպիսի է Ոկտաւիոսի իր որդւոյն վրայ ունեցած խնամքը. ասկից դուրս նաև անոր միտքը կրթութեամբ պարտքը թողած է վարժապետացը վրայ:

Այս առատ Սիրոս, այն Յոյն գերին որուն վրայ որ քեզի խօսեր եմ, զիս իրեն պատանի տիրոջը քով տարաւ, որ Իսոկրատէն հասուած մը թարգմանելու զբաղած էր: Երբոր իմով ըլլալս իմացաւ, աշխուժով մը ոտք ելելով ըսաւ ինծի յուրաքէն. «Ո՛վ Պողիկատ, որչափ շնորհակալ պէտք է որ ըլլամ աստուածոց, որ Աթենքի քաղաքացի մը իմ քովս բերին, այն հռչակաւոր քաղաքէն՝ որ այնչափ հռչակաւոր մարդկանց հայրենիք է: Իմ անկեղծ բարեկամութիւնս որ քեզի սիրով կը նուիրեմ, ուր էր թէ կարենար մեղմացնել քու ցաւդ, որ ունեցած ես այնպիսի բարեբաղդ հայրենիքէ մը հեռանալովդ համար, ու ես ալ քու ձեռք տալովդ կարենայի կրթութիւն այն գիտութեանցը մէջ, որոնցմով Յոյնք այնչափ զարմանալի եղեր են»:

Այս առաքինի փափաքը այնպէս սրտիս ազդեց,

որ գթով լցուած այն ազնիւ պատանւոյն վրայ՝ մէկէն իրեն պլլուեցայ ըսելով. «Այո, ես քու բարեկամք պիտի ըլլամ. մենք միասեղ պիտի սովորինք. ու զիս երջանիկ պիտի սեպեմ» թէ որ կարենամ քու յառաջագիմութեանդ օգնելու որչափ որ իմ ձեռքէս կու գայ»:

Ահա. ուր իցեմ եղիւն. յո՛ գիմեալ գնամ. ուր իցէ ինչ տեղի յոր անհետացի անձկութիւն որ զիս տագնապէ: Ո՛ր իջանիկ աւուրք, յո՛ սրա. ցայք»:

Ի՜նչ մեծ զարմանքի մէջ մնացի, երբ տեսայ որ պատանին մէկէն գրիչը ձեռքն առաւ իմ գրածիս տակը Եսթիդեսին այս հասուածք գրեց.

«Արէս անգամ զերծելոցն ի մարտէն շնորհ պատուարան, որում և գիլք ակն ածեն: Սիրոս մեր ողջոյն Արամազդայ ձօնեցի, և թէպէտ լայնորա յընդհանուր ցոլանայ, մինչ ևս յաղմամբի, այլ և այնպէս պատահարք կենաց անհետացած. լիք աչաց մերոց են: Սակայն որչափ և մթինք իցեն ճանապարհք Արամազդայ, զոր միանգամ սահմանէ՝ ակնարկութեան և եթ նորա սպասեն»:

Ես ապա յայսպէս յարմար իմաստը բերելուն վրայ՝ «Հասկըցու ինծի ըսի, Բնչպէս այգալի մատաղ հասակի մը մէջ այդչափ ծանօթութիւն ստացեր ես օտար լեզուի մը վրայ, մինչև նաև կարենալ այդպէս ըստ տեղւոյն վկայութիւն բերել. ամենէն հռչակաւոր մատենագիրներէն»:

«Ահա գիմացդ է. ըսաւ, իմ վարժապետս, Սիրոսը ինծի ցուցնելով: Քեզի ալ վարժապետ պիտի ըլլայ, ու քեզի պիտի ճանչնալ տայ հռովմայեցիքը՝ ինչպէս որ ճանչցուց ինծի Յոյները: Քանի՛ քանի անգամ իրեն ստորագրութիւններովը զիս քու հայրենեացդ հանգէսներուն մէջ խոթեր է յափշտակուած մտքով, ուր այլ և այլ ժողովրդոց բազմութիւնը մէկտեղ եկած՝ գեղարուեստից մրցանակը ձեռք բերելու կ'աշխատին: Իմ հայրս այդ բանիդ ակնաստեա վկայ եղեր է, երբոր իր առջի տարիները Յունաստանի վրայ զէնք շարժեց: Թէպէտ և իր հայրենիքը կը սիրէ, սակայն քու հայրենեացդ ալ գերազանցութիւնը ճանչցաւ, և ուզեց որ իր որդին անոր հրաշալի արդիւնքները ճանչնայ: Կուցէ օր մը ինծի հրաման տայ որ հոն Աթենք սովորելու երթամ: Երանի՛ թէ կարենայի տեսնել այն ատենը Պողիկատսը իր ընտանեացը գիրկը երջանկացած, ու ինքն ալ իրեն այն բարեբաղդութեան ժամանակը յիշէր մէյ մը զանոնք, որ իր թըշուառութեան ժամանակը իրեն բարեկամութիւն ըրին»:

(ՊԵՏԻ ԸՆԴՈՒՆԵԿՈՒԻ)

Անցեալ ամսուան դրոշմը կեղծագրութիւնն է

Ի թակ—արդն—սատանայ ի կապի—այր—աշխարհ—ա—սէր:

Ի թակարդն սատանայի կապի այր աշխարհասէր: